

ԿԱՐԾԻՔ

Արսեն Էդուարդի Հարությունյանի

«Միջնադարյան Տաթևը և նրա գրավոր-մշակութային ժառանգությունը»

թեմայով ատենախոսության մասին

Է. 00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի
գիտական աստիճանի համար

Տաթևը միջնադարյան Հայաստանի ամենանշանավոր վանքերից է, որը տեղական ժամանակ Սյունյաց աշխարհի եպիսկոպոսության աթոռանիստն է եղել, նշանավոր է իր պատմությամբ, ճարտարապետությամբ և հարուստ գրավոր-մշակութային ժառանգությամբ: Ներկա աշխատությունը, կարելի է ասել, Տաթևի պատմամշակութային ժառանգության ամենամբողջական և համալիր ուսումնասիրությունն է՝ կատարված գիտական բարձր մակարդակով: Այն միջգիտակարգային հետազոտություն է, որտեղ համատեղված են պատմական և հնագիտական, աղբյուրագիտական, բանասիրական, արվեստաբանական, ձեռագրագիտական և իհարկե վիմագրագիտական ուսումնասիրությունների արդյունքները: Այս վերջինը հեղինակի ամենաուժեղ կողմն է և ատենախոսության թեման նրան հնարավորություն է տվել լիովին դրսևորելու իր հմտությունն ու կարողությունները Տաթևի և վանքապատկան մի շարք բնակավայրերի վիմագրական հարուստ ժառանգությունը արժանի ձևով ներկայացնելու համար:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլխից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկերից: Ներածության մեջ հիմնավորված է թեմայի կարևորությունն ու արդիականությունը, ներկայացված են ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, աղբյուրները, ուսումնասիրվածության աստիճանը, գիտական նորույթը, կառուցվածքը:

Աշխատության գլուխները համապատասխանաբար վերնագրված են՝ «Տաթևի վանական համալիրը և վիմական արձանագրությունները», «Տաթևի վանքը՝ գրչության

և ուսումնագիտական կենտրոն», «Որոտանի կիրճի՝ Տաթևի վանքապատկան հին գյուղատեղերի պատմամշակութային ժառանգությունը», «Տաթևի վանքին հարակից փոքր եկեղեցիները» և «Անապատական շարժման վերագարթոնքը Սյունիքում»: Ատենախոսությունն ավարտվում է 20 կետից բաղկացած եզրակացություններով, որոնցում ամփոփվում են ուսումնասիրության արդյունքները:

Բուն ուսումնասիրությունից բացի, առանձին արժեք է ներկայացնում չափազանց հարուստ հավելվածը: Իզուր չէ, որ ատենախոսն այն համարում է աշխատության հիմնական մասերից մեկը: Այն բաղկացած է Տաթևի վանքի և շրջակայքի հուշարձանների նորահայտ և վերընթերցված՝ լրացված արձանագրությունների աղյուսակից՝ վիմագրերի ամբողջական մեջբերմամբ (236 միավոր), Տաթևի վանքում և անապատներում ընդօրինակված, կամ այս կենտրոնի հետ առնչություն ունեցած և գրատանը պահված ձեռագրերի ցուցակներից, Սյունյաց առաջնորդների և Տաթևի վանահայրերի գավազանագրքից՝ տեղեկաշատ ծանոթագրություններով, ինչպես նաև փաստավավերագրական նյութերից՝ արխիվային և նոր լուսանկարներ, վիմագրերի և եկեղեցական առարկաների գրչանկարներ, չափագրություններ ու հատակագծեր, տեղագրական քարտեզներ:

Հայագիտությանն ի՞նչ նպաստ և նորություն է բերում այս աշխատությունը:

Ատենախոսության հենց առաջին գլխի առաջին ենթաբաժինը, որը վերնագրված է «Մբ Եվստաթեոս առաքյալի ավանդությունը», լուծում է վանքի պատմության և մասնավորապես, նրա անվան հետ կապված՝ ցայժմ անորոշ մնացած մի կարևոր հարց՝ պարզելով, որ Մբ Եվստաթեոսի անունը հնավանդ չէ և շրջանառվել է 15-րդ դարից սկսած՝ համապատասխան դավանաբանական նկատառումներով:

Այս գլխի հաջորդ ենթաբաժիններում ներկայացվում են Կաթողիկե Մբ Առաքելոց եկեղեցին, մասնավորապես նաև՝ քանդակային հարդարանքը՝ նորովի մեկնաբանությամբ, պարզվում են վանքում ծավալված շինարարական առնվազն յոթ փուլերը, հանգամանալից անդրադարձ է արվում բոլոր կառույցներին ու կոթողներին, անգամ այժմ գոյություն չունեցող (հին գավիթ, զանգակատուն և այլն), 1043 թվականին կառուցված հին գավթ-սրահին, պարզաբանվում են դրանց կառուցման

հանգամանքները, ընդգծվում և որոշ դեպքերում բացահայտվում են դրանց առանձնահատկությունները և այլն:

Աշխատության մեջ, ըստ էության, առաջին անգամ համալիր ուսումնասիրությամբ ներկայացվում է նաև Տաթևի ձեռագրական ժառանգությունը (երկրորդ գլուխ): Քննվում են Տաթևի ձեռագրերի գրչական և մանրանկարչական առանձնահատկությունները, հիշատակարանների աղբյուրագիտական արժեքը և այլն: Նոր մանրամասներով է ներկայացվում նաև վանքի գիտակրթական դերը՝ Տաթևի համալսարանի գործունեությունը:

Մեծապես կարևորում են ատենախոսության երրորդ և չորրորդ գլուխները՝ նվիրված Որոտանի կիրճի՝ Տաթևի վանքապատկան հին գյուղատեղերին, դրանց պատմամշակութային ժառանգությանը և Տաթևի վանքին հարակից փոքր եկեղեցիներին: Սա մի նոր մոտեցում է: Հայկական խոշոր վանքերին նվիրված նախկինում եղած աշխատություններում ուսումնասիրողները, կարելի է ասել, հիմնականում դուրս չեն եկել վանական պարիսպների շրջագծից: Մինչդեռ ներկա ուսումնասիրությունը մեզ է ներկայացնում Տաթևի վանքը՝ լայն համապատկերում, վանքապատկան գյուղերով, կալվածքներով, դրանցում եղած եկեղեցիներով և բազմազան աշխարհիկ ու պաշտամունքային հուշարձաններով, վերջիններիս հայտնի և նորահայտ վիմագրերով և այլն: Հեղինակը վանքամերձ մի շարք փոքր եկեղեցիներ՝ Ցաքուտ, Տամալեկ, Ցուր, Աղանձ, «Կոտրած խաչ», թվագրում է 10-րդ դարով՝ ցույց տալով, որ վանքի վերագարթոնքի շրջանում եկեղեցիներ են կառուցվել նաև նրա շրջակայքում:

Ատենախոսության հինգերորդ գլխում հեղինակը նաև ժամանակագրորեն ամփոփում է աշխատությունը, անդրադառնալով Սյունիքի հոգևոր-եկեղեցական կյանքի մի կարևոր շրջանին՝ անապատական շարժման վերագարթոնքին 17-18-րդ դարերում, երբ հիմնվում են Սյունյաց կամ Հարանց Մեծ անապատը և Շինուհայրի Կուսանաց անապատը: Դրանք նույնպես եղել են գրչության ու ձեռագրապահպանման կենտրոններ:

Որպես աղբյուրագետ, շատ բարձր եմ գնահատում աշխատության մեջ առաջին անգամ ներկայացվող նորահայտ վիմագրական հարուստ նյութը: Ինչպես հեղինակն է նշում. «գիտական շրջանառության մեջ է դրվում 9-19-րդ դարերի 220 նորահայտ վիմագիր, որոնցից 152-ը վկայված են ատենախոսության շարադրանքում, իսկ ամբողջական ցուցակը՝ հավելվածում: Նախկինում հրատարակված ևս 140 վիմագիր հիշատակել ենք մեր հետազոտության հետ կապված խնդիրները լուսաբանելիս, որոնք ներկայացվել են ոչ միայն էական ճշգրտումներով, այլև՝ նոր մեկնաբանմամբ, գրչանկար-լուսանկարներով» (էջ 16): Հեղինակը հավաստում է նաև իր կողմից գիտական շրջանառության մեջ դրված հուշարձանների մասին՝ «...անհայտ եկեղեցի, մատուռ, քառանիստ կոթող, թևավոր խաչ, խաչքար, տապանաքար և այլն» (էջ 7):

Ներկայացված ատենախոսությունը գիտական ամենայն բժախնդրությամբ շարադրված արժեքավոր աշխատություն է, որն անկասկած արժանի է նաև հրատարակության, իսկ հեղինակը՝ Արսեն Հարությունյանը, վստահաբար կայացած մասնագետ է, քաջագիտակ հատկապես հնագրության և վիմագրության հարցերում, որն արտահայտվել է նաև նրա նախորդ կոթողային աշխատություններում՝ նվիրված Սուրբ Էջմիածնի և Խոր Վիրապի վանքերին:

Ներկա ատենախոսության արժանիքների մասին կարելի է երկար գրել, սակայն բավարարվենք այսքանով: Աշխատության գնահատելի կողմերից է նաև այն, որ հեղինակը մեծ տեղ է հատկացրել այսպես կոչված «դաշտային» աշխատանքին, իր հետազոտություններն իրականացնելով համապատասխան տեղերում, կարելի է ասել՝ մետք առ մետք կամ քար առ քար ուսումնասիրելով հնագիտական տեղավայրերն ու հուշարձանները, որի արդյունքն են նաև բազմաթիվ նոր հայտնաբերված և ճշգրիտ վերծանված վիմագրերը:

Երկու դիտողություն ունեմ ատենախոսության վերաբերյալ:

1. Ներածության մեջ հեղինակը գրում է. «Սույն ատենախոսությունը Սյունյաց հոգևոր-մշակութային կենտրոն Տաթևի վանքի պատմությունը միջնադարյան զրավոր սկզբնաղբյուրների քննությամբ լուսաբանող առաջին համալիր հետազոտությունն է,

որով փորձ է արվում սահմանել հայագիտությանը ցարդ անհայտ մի նոր գիտաճյուղ, այն է՝ *տաթևագիտությունը*՝ իրեն բնորոշ առանձնահատկություններով» (էջ 15):

Ոչ մի կասկած չունենալով Տաթևի վանքի բազմաճյուղ և հարուստ ժառանգության կարևորության հարցում, ինչի առհավատչյան հենց սույն ատենախոսությունն է, այնքան էլ տեղին չեմ համարում *«տաթևագիտությունը»* որպես նոր գիտաճյուղ հայտարարելը: Նույն տրամաբանությամբ կարող են գիտաճյուղ համարվել, օրինակ, *«էջմիածնագիտությունը»*, *«հաղբատագիտությունը»*, *«աղթամարագիտությունը»* և այլն: Այսպիսի ձևակերպում, եթե չեմ սխալվում, հիմնականում օգտագործվում է Բագրատունյաց Հայաստանի Անի մայրաքաղաքին վերաբերող ուսումնասիրությունների առնչությամբ՝ անհագիտություն անվամբ, քանի որ այդ քաղաքի բազմաշերտ պատմամշակութային ժառանգությունն իրոք որ ահռելի է և հետազոտական առումով միջազգային ընդգրկում ունի: Սակայն, անգամ Անիի պարագայում, այդ անվանումը որոշ չափով պայմանական է:

2. Թեև ատենախոսությունը *«Հնագիտություն»* մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար, որով էլ թերևս պայմանավորված է բովանդակության կազմումը՝ ըստ հուշարձանների, սակայն կարծում եմ, որ կարելի էր ուսումնասիրությունը սկսել Սյունյաց մետրոպոլիտական աթոռի վերաբերյալ պատմական ակնարկով, որպեսզի ավելի պարզ լիներ, թե ինչու է Տաթևին այդքան մեծ դեր վերապահվել: Ճիշտ է, *«Հավելվածում»*, Սյունյաց առաջնորդների և Տաթևի վանահայրերի Գավազանագրքի ծանոթագրություններում այդ մասին որոշ տվյալներ են ներառված, սակայն կարծում եմ, որ աշխատությունը հրատարակության պատրաստելիս կարելի է մեկ առանձին ենթավերնագրով ներկայացնել նաև այդ հարցը:

Իսկ արդեն որպես առաջարկություն, հեղինակին խորհուրդ եմ տալիս Սյունյաց աթոռին անդրադառնալ նախատաթևյան ժամանակից սկսած՝ նկատի ունենալով հնագույն եպիսկոպոսանիստ Շաղատը:

Բնականաբար, նշածս դիտողությունները բնավ չեն նվազեցնում ատենախոսության արժեքը, որը ջանադիր և տևական աշխատանքով ստեղծված,

հսկայական հետազոտական նյութ ընդգրկող և գիտական բազմաթիվ նորություններ պարունակող փայլուն աշխատություն է:

Մեղմագրում ներկայացված դրույթները և հեղինակի տպագրած երկու տասնյակից ավելի աշխատությունները (հոդվածները), համապատասխանում են աստենալոսոֆյան բովանդակությանը: Այդ հրատարակությունների մեջ ուզում եմ առանձնացնել անցյալ տարի լույս տեսած ծավալուն մենագրությունն անգլերենով՝ «Տաթև. Սյունյաց հոգևոր միջնաբերդը» (Arsen Harutyunyan, The Spiritual Citadel of Syunik: Tatev, Yerevan, 2024):

Ելնելով վերը շարադրվածից միջնորդում եմ մասնագիտական խորհրդի առաջ՝ Արսեն Էդուարդի Հարությունյանին՝ «Միջնադարյան Տաթևը և նրա գրավոր-մշակութային ժառանգությունը» թեմայով Է. 00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ աստենախոսության համար շնորհել պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, որին նա արժանի է լիովին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Կարեն Մաթևոսյան
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանի
Գրչության կենտրոնների ուսումնասիրման բաժնի վարիչ

Պ.գ.դ. Կարեն Մաթևոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Մեսրոպ Մաշտոցի անվ. Մասնագիտական
գիտական քարտուղար՝

Վահէն Թորոսյան

14.10. 2025 р.

